ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2026 թվականի հուլիսի 9 թիվ 300-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԼԵՌՆԱՊԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՆԻ ՄԱՐԱԲՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 20-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 61-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Լեռնապարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անի Մարաբյանի 2026 թվականի հուլիսի 7-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Լեռնապարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անի Մարաբյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդի մասը 2025-2026 թվականների ուսումնական տարվա համար 20 աշխատանքային օր տևողությամբ՝ 2026 թվականի հուլիսի 13-ից օգոստոսի 7-ը ներառյալ:

2.Անի Մարաբյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում <<Լեռնապարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել <<Լեռնապարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Վարդանուշ Հովակիմյանի վրա:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 7/10/2026 12:25:54 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. հուլիսի
ք. Աշտարակ